ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2018թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 53-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման N2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ներքին առդիտի բաժին» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Ներքին առդիտի բաժին				
1	բաժնի պետ	1	322000		322000
2	գլխավոր մասնագետ	7	225000		1575000
3	առաջատար մասնագետ	2	219000		438000
	ԸՆԴԱՄԵՆԸ	10			2335000

»

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «447» և «109979300» թվերը փոխարինել համապատասխանաբար «454» և «111542300» թվերով.

3) «Ամբողջը» տողում «1998» և «436397100» թվերը փոխարինել համապատասխանաբար «2005» և «437960100» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտի բաժնի (այսուհետ՝ Բաժին) աշխատանքների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու հանգամանքով:

Երևանի ենթակայությամբ գործունեություն են ծավալում 485 առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, 32 կառուցվածքային և 13 առանձնացված ստորաբաժանումներ (ընդամենը՝ 530), որոնք համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի առնվազն 3 տարին մեկ պետք է ենթարկվեն աուդիտի կամ միջին հաշվով տարեկան ընդհանուր առմամբ 181 կազմակերպություններ և ստորաբաժանումներ:

Հավելենք նաև, որ դիմում-բողոքներին, վերահսկողության տարբեր կառույցների կողմից բարձրացված հարցերին հրատապ և բազմակողմանի արձագանքելու համար անհրաժեշտություն է առաջանում տարեկան հաստատված աուդիտի ծրագրից դուրս իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություններ:

Հաշվի առնելով, որ գործող հաստիքացուցակով Բաժինը համալրված է 3 մասնագետներով, իսկ նման քանակով հնարավոր չէ ապահովել վերոհիշյալ աշխատանքների ծավալը, ինչպես նաև ներքին հսկողության համակարգն ու ռիսկերի կառավարման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու և հետագայում գործող կազմակերպությունների օպտիմալացման գործընթացն ապահովելու անհրաժեշտությունը առաջարկվում է Բաժինը համալրել ևս 7 մասնագետներով:

Հարկ է նշել նաև, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 91-րդ հոդվածի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի» 53-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն բաժնետիրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման և ստուգման գործընթացների համակարգման նպատակով անհրաժեշտ է բաժնետիրական ընկերություններում ձևավորել վերստուգող հանձնաժողովներ (վերստուգողներ), ինչը ներկայումս ձևավորված չէ: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N732-Ն որոշման դրույթներով նպատակահարմար է վերստուգողի լիազորությունների կատարումը վերապահել ներքին աուդիտի ստորաբաժանմանը:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ